**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ**

# Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

19 փետրվարի 2018թ. թիվ 15

«ԿՈՐՅՈՒՆ» ՌԱԶՄԱՄԱՐԶԱԿԱՆ ԽԱՂԵՐ
ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.16 կետի «ա» ենթակետով, ի կատարումն ՀՀ կրթության և գիտության նախարարի 03.10.2017թ. թիվ 1155-Ա/2 հրամանով հաստատված «ՀՀ հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների միջև «Կորյուն» ռազմամարզական խաղերի կազմակերպման և անցկացման» կարգի 30-րդ կետի պահանջների՝

Կ ա ր գ ա դ ր ու մ   եմ.

1. ՀՀ Լոռու մարզում «Կորյուն» ռազմամարզական խաղերի մարզային փուլը կազմակերպելու և անցկացնելու համար ստեղծել մարզային հանձնաժողով՝ համաձայն հավելվածի:

2. Սույն կարգադրության կատարման հսկողությունը դնել մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ Մ.Սայադյանի վրա:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2018թ. փետրվարի 19
ք.Վանաձոր